1.4	Դպրոցի տնօրենի	Տնօրինություն	Մշտապես	

	տեղակալների և դասղեկների կարողությունների ու հմտությունների զարգացում: /Դպրոցում գործածության ենթակա փաստաթղթերի վարման գործընթացը կազմակերպելու համար/:			
1.5	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների կատարման և դպրոցում գործածության ենթակա փաստաթղթերի վարման գործընթացի վերահսկողության կազմակերպում	Տնօրեն, Համակարգող	Ամիսը մեկ անգամ	
1.6	Համապատասխան աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվությունների ընդունում և դրանց քննարկմանը շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովում	Տնօրինություն Համակրգող	Եռամսյակը մեկ անգամ	

1.7	Համընդհանուր ներառական կրթությանը անցնելու համար համապատասխան պայմանների ապահովում	Տնօրինություն, դպրոցի կոլեգիալ Կառավարման մարմին խորհուրդ	Մինչև 2020թ.	
2	ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ			
2.1	Մանկավարժական /ուսուցչական/ անձնակազմի մասնագիտական զարգացման շարունակական գործընթացի կազմակերպում:Տարակարգ ստացող ուսուցիչների թվի ավելացում:	Տնունօրիթյուն	Մշտապես	
2.2	Լավագույն աշխատողին խրախուսելու համար առաջարկությունների ներկայացում:	Փոխտնօրեններ	Կիսամյակը մեկ անգամ	
2.3	Աշակերտների ցածր առաջադիմության պատճառների վերացման համար առաջարկությունների ներկայացում:	Առարկայական մեթոդական միավորումներ, տնօրենի՝ ուսգծով փոխտնորեն, դասղեկներ	Տարվա ընթացքում	
2.4	Աշակերտների բազմակողմանի հետաքրքրությունների ու կարողությունների	Ուսուցիչներ, դասղեկներ	Մինչև օգոստոսի 30-ը և տարվա ընթացքում	

	բացահայտում: Յուրաքանչյուր աշակերտի համար անձնական առաջընթացի պլանի կազմում:			
2.5	Աշակերտների հետաքրքրությունների, կարողությոնների և նախասիրությունների հիմման վրա առաջնային առարկաների ցանկի առանձնացում: Ուսումնական պլանը սովորողների կարիքների ու հետաքրքրություններին համապատասխանեցում:	ՈՒսուցիչներ, փոխտնօրեններ	Մինչև օգոստոսի 30-ը և տարվա ընթացքում	
2.6				
3	ԾՆՈՂ-ԴՊՐՈՑ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ			
3.1	Որոշումների կայացման գործում աշակերտների և նրանց ծնողների ներգրավում: Մանկավարժների /ուսուցիչների/ ասառաջարկությունների քննարկումների կազմակերպում:	Տնօրեն, փոխտնօրեններ , դասղեկներ, ծնող խորհուրդ	Տարվա ընթացքում	
3.2	Ծնողների և մանկավարժների համագործակցությամբ ա. դաստիարակչական ածշատանքների	Դասղեկներ, ծնող խորհուրդ	Օգոստոսի 30 Տարվա ընթացքում Տարվա ընթացքում	

	տարեկան պլանի նախագծի ներկայացում բ. դասարանական /և համադպրոցական/ ժողովների և կոնֆերանսների կազմակերպում և անցկացում			
3.3	Արտադասարանական միջոցառումների ակտիվացում և աշակերտների ու ծնողների շրջանում ուսման նկատմամբ հետաքրքրության բարձրացում:	Դասղեկներ, դաստ. գծով փոխտնօրեն	Տարվա ընթացքում	
3.4				
4	ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ			
4.1	Դասասենյակներն ու առարկայական կաբինետները վերազինելու և դպրոցը նոր սարքավորումներով ու գույքով համալրելու համար միջոցների նախատեսում:	Տնօրինություն, համակրգող դպրոցի կոլեգիալ կառավարման մարմին խորհուրդ	Դպրոցի տարեկան բյուջեն պլանավորելիս	
4.2	Դպրոցի բյուջեն /նախահաշիվը/ ՀՀ ԿԳՆ 2015թ-ի մարտի 30-ի N 205 Ա/Ք հրամանով հաստատված կարգի համաձայն կարգավորում:	Տնորինություն, համակրգող դպրոցի կոլեգիալ կարավարման մարմին՝	Ըստ ժամանակացույցի	

		խորհուրդ		
5	ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ			
5.1	Ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված դասարանական և համադպրոցական միջոցառումների կազմակերպում	Դասղեկներ, ծնող խորհուրդ	Տարվա ընթացքում	
5.2	Դպրոցում աշակերտների թվի ավելացմանը նպաստող միջոցառումների կազմակերպում	Դպրոցի համակզմ ծնողներ	Մշտապես	

4.ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացնողներն են լինելու ոչ միայն տնօրենը, այլև՝

- ***դպրոցի վարչական, սպասարկող և մանկավարժական համակազմերը,***
- ***դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների անդամները,***
- ***ծնողները, համայնքի անդամները:***

5.ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Առանձնակատկությունից բխող գնահատման չափանիշները

- Դպրոցի զարգացման գործընթացը պետք է մշտական հարաբերակցության մեջ լինի արդյունավետության հետևյալ չափանիշների հետ.

- սոցիալ-մանկավարժական (հաստատության զարգացման համապատասխանությունը նորմատիվ-իրավական ակտերի պահանջներին),
- կրթական (գիտելիքների բարձր որակին ձգտելը և հումանիստական արժեքների կրումը),
- հոգեբանական և մանկավարժական (ուսումնական գործընթացի մասնակիցների համար բարենպաստ պայմանների ստեղծումը և անհատական կրթվածության աճի ապահովումը):

Ակնկալվող արդյունքները

- Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները.
- ուսուցիչների մասնագիտական և ընդհանուր մշակութաբանական ու մեթոդաբանական պատրաստվածության աճ,
- ուսուցիչների ինքնակրթության մոտիվացիայի աճ,
- ուսուցման որակի աճ,
- ուսումնառության որակի աճ,
- սովորողների շրջանում կրթության վարկի, նրանց իրազեկվածության աճ,
- դպրոցի՝ որպես նորարարությունների ակտիվ ներդրման և համայնքի կրթամշակութային կենտրոնի դերի աճ,
- դպրոցի զարգացմանն ուղղված արտաբյուջետային միջոցների աճ,
- սովորողների և ուսուցիչների անհատական ձեռքբերումների աճ,
- կրթության որակի աճ:

6. Դպրոցի զարգացման ծրագրի ռիսկերը

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերն են.

1) երկրում սոցիալական, քաղաքական, տնտեսական անկայուն

վիճակի վտանգը, որը կխոչընդոտի ծրագրի իրականացմանը,

2) սովորողների թվի նվազումը, որը կբերի ֆինանսավորման կրճատման,
3) մանկավարժական կադրերի արտահոսքը,
4) ուսուցիչների ստեղծագործական, նորարարական գործունեությունը խթանող խրախուսման միջոցների պակասը,
5) ծրագրային ոչ իրատեսական դրույթների կատարման անհնարինությունը,
6) առկա ռեսուրսների և իրականացված ծախսերի անհամապատասխանության վտանգը (երբ արդյունքը չի արդարացնում ծախսված միջոցները), ծրագրային գործողությունների անարդյունավետությունը և այլն:

Նպատակի խնդիրների լուծմանն ուղված յուրաքանչյուր գործողության հետ կապված հնարավոր ռիսկերը

Դպրոցի զարգացման ծրագրի գլխավոր նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է դպրոցում ձևավորել բանիմաց, ժամանակակից կրթական պահանջներին համընթաց քայլող, պատրաստակամ մանկավարժների հզոր թիմ, որը կկարողանա իրականացնել դպրոցի որդեգրած քաղաքականությունը:

- Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական և մեթոդամանկավարժական պատրաստվածության որակը բարելավելու նպատակով սահմանվում են հետևյալ խնդիրները.
- Բարձրացնել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը,
- ստեղծել մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացման մեխանիզմներ,
- աջակցություն մանկավարժներին՝ մշակելու, ներկայացնելու և հրապարակելու մասնագիտական հոդվածներ, իրենց աշխատանքների արդյունքների վերաբերյալ մեթոդական նյութեր,
- խթանել մանկավարժների հետազոտական աշխատանքների կատարումը,
- ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:
- Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.
- Դպրոցի ավելի փորձառու մանկավարժների դասավանդման արդյունավետ մեթոդները նորի հետ համադրելով՝ դրանք

փոխանցել երիտասարդ մանկավարժներին բաց դասերի, օգտավետ զրույցների, փորձի փոխանակման միջոցով:

- Օգտվելով ուսուցիչների՝ ներկայումս գործող վերապատրաստման
- Ծրագրերից՝ դպրոցի մանկավարժներին պարբերաբար տեղեկատվություն տալ ժամանակակից մեթոդների վերաբերյալ:
- Ուսուցիչների վերապատրաստումը նպատակաուղղել նաև համակարգչային գիտելիքների և օտար լեզվի իմացության ամրապնդմանը:
- Ստեղծել բարենպաստ պայմաններ դպրոցի մանկավարժների ինքնակրթության համար, ապահովել նրանց ուսումնական ծանրաբեռնվածության մակարդակը:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցել հանրապետության դպրոցների և արտասահմանյան կրթական հաստատությունների հետ, ինչը կնպաստի դպրոցի կառավարման և ուսումնական ոլորտներում փորձի փոխանակմանը, ինչպես նաև ուսուցիչների և աշակերտների փոխանակման ծրագրերի իրականացմանը:
- Մշտապես կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ինչպես մանկավարժական բուհերում, այնպես էլ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության կառույցներում:Վերապատրաստումն իրականացնել երկու ուղղությամբ, մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործման և ատեստավորման նպատակով:
- Պարբերաբար ուսումնասիրել վերապատրաստում անցած ուսուցիչների մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը: Ըստ կարգի՝ յուրաքանչյուր տարի ատեստավորման ուղարկել մանկավարժական աշխատողների 20%-ին:
- Մշտապես դիտարկել դպրոցի մանկավարժական որակական կազմը,
- Մանկավարժական գործունեությունը նպատակաուղղել յուրաքանչյուր սովորողի՝ սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և ազգային այլ արժեքների կարևորության ու նշանակության, դրանց կրողը

լինելու գիտակցության բարձրացմանը: Նա պետք է հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, գիտակցի, որ կրթությունը մեծագույն արժեք է, կարևորի բարոյական չափանիշները և գեղագիտական արժեքները, գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, դրսևորի աշխատասիրություն, արժևորի և գնահատի սեփական և այլոց աշխատանքը, անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:

- Մանկավարժական համակազմի որակական բարելավման ակնկալվող արդյունքները՝
- որակյալ, մոտիվացված, ստեղծագործող, հետազոտող, պատրաստակամ մանկավարժական համակազմ,
- աշակերտակենտրոն և արդյունավետ ուսումնական գործընթաց:

7.Գործընթացի կատարելագործման անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործումն ուղղակիորեն կապված է ուսումնական միջավարի բարելավման գործընթացների հետ: Սովորողների հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը նպաստելու նպատակով ծրագրում եմ դպրոցում ստեղծել համապատասխան կրթադաստիարակչական միջավայր, որի հիմնական նպատակը կլինի՝

- սովորողների և ուսուցիչների առողջ կենսագործունեության ապահովումը,
- տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման ընդլայնումը՝ մանկավարժների մասնագիտական զարգացման, նոր մեթոդների կիրառման և ուսումնական գործընթացն ակտիվացնելու համար,

- դպրոցի ներքին էլեկտրոնային ցանցի գործարկումը՝ փաստաթղթաշրջանառությունն արդյունավետ իրականացնելու համար,
- դասասենյակների, առարկայական կաբինետների և լաբորատորիաների արդիականացումը,
- դպրոցի բոլոր մասնաշենքերը վերանորոգելու ուղիների մշակումը:
- Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով ծրագրում եմ մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ՝ պետական և միջազգային կազմակերպություններ:
- Դպրոցական շենքի վերանորոգման խնդիրը լուծելու ուղղություններից մեկն էլ պետական կառույցների հետ համագործակցելն ու իրավիճակը լիարժեք ներկայացնելն է: Անհրաժեշտ է՝ հայթայթել միջոցներ, կազմակերպել տարբեր հոգաբարձուների խորհրդի աշխատանքները, որոնց նպատակը պետք է լինի ներդրումներն ու նվիրատվությունները: Գործընթացը կազմակերպելու եմ առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, դպրոցի, պետական մարմինների, ծնողական համայնքի համար:
- Դպրոցում նոր համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակների և այլ ժամանակակից սարքավորումների պակասը թույլ չի տալիս ներդնել արդի աշակերտակենտրոն և ակտիվ մեթոդներ, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:
- Դպրոցի գերխնդիրն եմ համարում կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը: Սովորողների համար ստեղծել տեսական գիտելիքների գործնականում

կիրառման բավարար կարողություններ ու հմտություններ, նրանց տալ մասնագիտական գործունեության համար արդյունավետ կողմնորոշում:

- ***Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման և ուսումնական միջավայրի բարելավման գործընթացների ակնկալվող արդյունքներն են.***
- Դպրոցում ուսուցիչների և սովորողների ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական առողջ միջավայր,
- Գրավիչ ուսումնական միջավայր,
- Ուսումնական գործընթացում ՏՀՏ-երի արդյունավետ օգտագործում,
- Սովորողների մարզական պարապմունքների լիարժեք իրականացում:

- **Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների յ արժեհամակարգի ձյավորումը յ զարգացումը**
- Բարձրորակ կրթություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է դպրոցում ձևավորել՝
- կրթության կազմակերպման համալիր մոտեցում.
- ժողովրդավարական ու աշակերտակենտրոն կառավարման մոդել.
- ուսուցման որակի կառավարման նոր համակարգի ներդրում, կրթության բնագավառին անհարիր երևույթների բացառում.
- Յուրաքանչյուր առարկայի ուսուցումը համապատասխանեցնել երեխայի շահերին՝ հետագայում մասնագիտություն ձեռք բերելու և աշխատաշուկայի կողմից նոր սերնդին ներկայացվող մրցակցային պահանջներից ելնելով: Չափազանց կարևոր է երեխայի սոցիալականացման խնդիրը, որին հասնելու համար պետք է սովորողների միջոցով իրականացնել փոքրիկ գիտափորձեր՝ օգնության ձեռք մեկնելով ձախողումների պահին և նշանավորելով երեխայի

հաջողությունները: Մանկավարժները պետք է հանդես գան որպես ուղղորդող դերակատարներ՝ կենտրոնում թողնելով երեխային՝ իր առանձնահատկություններով:

Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.

Մեծ ուշադրություն պետք է դարձնել սովորողների ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Դրանք զարգացնելու նպատակով անհրաժեշտ է՝

- սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին՝ զգայության, ընկալման և մտապատկերման, վերլուծելու, մտահանգումներ անելու, ընդհանրացնելու և համադրելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու և հիմնավորելու միջոցով.
- զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողություններն ու հմտությունները (լսել-ընկալել-բանավիճել, տեղին օգտագործել սովորած եզրույթները, օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից, սովորել և սովորեցնել, դրսևորել առողջ մրցակցություն, ճանաչել և ընդունել ուրիշների շահերը, լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները).
- զարգացնել ստեղծագործական և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները (դրսևորել ստեղծագործական երևակայություն, ընկալել և ընդունել նյութական ու հոգևոր նոր արժեքներ, անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները, գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրսևորել պարտաճանաչություն, ճիշտ տնօրինել ժամանակը, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները).
- դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդների հետ համատեղ աշխատանքի միջոցով շրջանավարտին դաստիարակել այնպես, որ նա ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք կերպով տիրապետի Հայաստանի Հանրապետության պետական լեզվին՝ հայերենին:
- Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորման և զարգացման գործընթացների ակնկալվող արդյունքներն են՝
- յուրաքանչյուր շրջանավարտ ունի ազգային մտածողություն, մտահոգվում է ազգային և պետական խնդիրների լուծմամբ, ունի

պետական չափորոշչով սահմանված գիտելիքների պաշար և դրանք կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն:

- սովորողները գիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները, օրինապահ են, ազնիվ, մարդասեր, ունեն վստահություն սեփական ուժերի հանդեպ, ունակ են սովորելու ողջ կյանքի ընթացքում, առաջնորդվում են «Իմ ուժը իմ հայրենիքն է», «Իմ տունը իմ դպրոցն է» կարգախոսներով:
- սովորողները ակտիվ մասնակցում են տարբեր մրցույթների և օլիմպիադաների:
- Մեր դպրոցի նպատակը եղել և մնում է ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության բարձր մակարդակի ապահովումը՝ մշտապես հենվելով ազգային արմատների վրա:
- Դպրոցի շրջանավարտը պետք է.
- ունենա պետական մտածելակերպ,
- պատրաստ լինի դիմակայել ապագա մարտահրավերներին,
- ունենա անհատականություն,
- զինված լինի բնության և հասարակության մասին անհրաժեշտ գիտելիքներով,
- դաստիարակված լինի ազգային ոգով, մտածելակերպով և հոգեբանությամբ,
- կրողը լինի իր ազգային հոգևոր մշակութային արժեքների,
- սիրի իր և լավ տիրապետի մայրենի լեզուն, իմանա նաև օտար լեզուներ,
- սիրի իր հայրենիքը, պաշտպանի նրա անկախությունն ու անվտանգությունը:

Դպրոցի կառավարման, մանկավարժական խորհուրդների և աշակերտական կոլեկտիվի դերի բարձրացումը

Դպրոցի կառավարումը կազմակերպվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և այն արդյունավետ իրականացնելու նպատակով դպրոցում ստեղծելու եմ իրավաբանական-տեղեկատվական գրադարան.

- «Կրթության ասին»ՀՀօրենքը,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը
- «Երեխայի իրավունքի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան
- «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքը
- ՀՀ կառավարության՝ կրթության ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական ակտեր
- ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններ և այլն:

Դպրոցի գործունեությունը պետք է հենվի ժողովրդավարության և մարդասիրության սկզբունքների վրա: Դպրոցում անհրաժեշտ է արմատապես բարելավել ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և նրանց ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: Առաջին հերթին պետք է հասնել այնպիսի արդյունքի, որ ծնողն ինքը շահագրգռված լինի դպրոցից որակյալ կրթություն պահանջելու և այդ ուղղությամբ դպրոցին աջակցելու հարցում:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել խթանելու դպրոցի կառավարման

խորհրդի գործունեությունը հետևյալ ուղղություններով.

- դպրոցում լրացուցիչ ծրագրերի իրականացում, դպրոցի արդյունավետ գործունեության կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման լիազորված մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դպրոցական շենքի վերանորոգման վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

Ծնողական խորհրդի գործունեությունը խթանող միջոցառումներ՝

- արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին մասնակցություն.
- ծնողական և աշակերտական խորհուրդների և դպրոցի կառավարման ու մանկավարժական խորհուրդների հետ կապի ամրապնդում.
- երեխայի իրավունքների պաշտպանություն դպրոցում,
- դպրոցի ծնողազուրկ, հաշմանդամ, նյութապես անապահով, ծնողական խնամքից զրկված, հաշմանդամ ծնող ունեցող, միայնակ մոր խնամքի տակ գտնվող սովորողների վերաբերյալ տվյալների պարբերական ճշտում.
- Սովորողների՝ ուսումնական պարապմունքներից բացակայությունների նկատմամբ հսկողություն.
- սովորողների սոցիալական պայմանների բարելավման գործում պետական և համայնքային մարմինների, բարերարների ներգրավում:

Աշակերտական կոլեկտիվի դերի բարձրացում՝ աշակերտական ինքնավարության միջոցով նրան տալով լիազորություններ՝

- հնարավորություն տալ աշակերտներին ինքնադրսևորվելու և սեփական կարծիքն ազատ արտահայտելու,
- ամրապնդել սովորող-ուսուցիչ, սովորող-ծնող, սովորող-համայնք հարաբերությունները,

- աշակերտական ինքնավարության լծակներն ուղղել սովորողների կրթությունը, ինքնակրթությունը, նրանց համակողմանի զարգացումը բարելավելուն:

Դպրոցում սահմանվելու են դաստիարակչական աշխատանքի ընդհանուր նպատակները.

1) դպրոցում սովորողների և ուսուցիչների կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում,
2) միջանձնային հարաբերությունների, հանդուրժողականության ձևավորում,
3) բնության, հասարակության, մարդու մասին աշակերտի գիտական գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորում,
4) սովորողների ճանաչողական ակտիվության զարգացում,
5) բարեխիղճ և համարժեք կերպով շրջապատում տեղի ունեցող երևույթներին արձագանքելու, սոցիալ-մշակութային ներկա պայմաններում կողմնորոշվելու կարողության ձևավորում,
6) քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորում,
7) արժեքային համակարգի, համամարդկային արժեքների, լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ հարգանքի, պատմական հիշողության ձևավորում,
8) ստեղծագործական ունակությունների զարգացում,
9) շրջապատում գեղեցիկը տեսնելու, գնահատելու կարողության զարգացում,
10) ինքնաճանաչման, ինքնազարգացման, ինքնաիրագործման և ինքնահաստատման ներքին պահանջի ձևավորում,
11) աշակերտական ինքնավարության կատարելագործում,
12) ծնողական համայնքի դերի բարձրացում:

9.Վերահսկողություն

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն դպրոցի զարգացման ծրագրի կատարման վերահսկումը դպրոցի խորհրդի օրենսդրական պարտականությունն է իսկ զարգացման ծրագրով

նախատեսված միջոցառումների իրականացումը լինելու է իմ ամենօրյա աշխատանքային պարտականությունը, որն իր մեջ ներառելու է.

- ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծություն, վերլուծության արդյունքում միջոցառումների վերանայում, այդ ուղղությամբ կառավարման և խորհրդակցական մարմինների նիստերում առաջարկությունների քննարկում,
- ուսուցիչների և սովորողների գործունեության շարունակական թեմատիկ, ընթացիկ, անհատական և կանխարգելիչ վերահսկողության իրականացում,
- ծրագրի իրականացման արդյունքների տարեկան ամփոփում և ներկայացում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդներին:

10.վերջաբան

Մեծապես կարևորելով տնօրենի պատասխանատվության աստիճանը, ընտրվելու դեպքում առաջնորդվելու եմ դպրոցի ղեկավարման ժողովրդավարական սկզբունքով և բարձրացնելու եմ կառավարման արդյունավետությունը:

Խորապես համոզված եմ, որ տնօրենը ժամանակակից ուսումնական հաստատությունում ուսուցիչների ղեկավարն է, թիմի առաջնորդը, միևնույն ժամանակ աշակերտների ու ծնողների գործընկերը, ուստի իմ կողմից ներկայացվող զարգացման ծրագիրն իրագործելու և Ձեր վստահությունը ստանալու նպատակով անհրաժեշտ եմ համարում եզրափակիչ մասում մեկ անգամ ևս նշել, որ իրականացնելու եմ՝

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների անդամների ու նրանց ներկայացնող մարմինների հետ հաճախակի հանդիպումների կազմակերպում և դպրոցի զարգացման ծրագրի իրագործման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: Շահագրգիռ քննարկումների կազմակերպում.

խորհրդակցական մարմինների անդամների ու նրանց ներկայացնող մարմինների հմտությունների և կարողությունների զարգացման ապահովում: Օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև կրթությունը կանոնակարգող այլ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկության ապահովում.

- Մեկ նպատակին ձգտող միասնական թիմի ստեղծում.
- Դպրոցի զարգացման ծրագիրն իրագործելու նպատակով օժանդակող խմբի ստեղծում (նեգրավելով խորհրդի և խոհրդակցական

մարմինների
- ներկայացուցիչներին).
- Համապատասխան աշխատանքների կատարման վերաբերյալ
- հաշվետվությունների ընդունում և դրանց քննարկմանը շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովում:

Որպես վերջաբան՝

Վերը նշված նպատակների իրականացման համար ցանկալի կլինի, որ բոլորս հիշենք Պյութագորասի հետյյալ խոսքերը. «Առավոտյան արթնանալով՝ հարցրու «Ես ի՞նչ պետք է անեմ»: Երեկոյան՝ նախքան քնելը՝ «Ես ի՞նչ եմ արել»:

ՑԱՆԿ

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմելու համար օգտագործված գրականության և իրավական ակտերի

ՀՀ	Օգտագործված գրականության կամ իրավական ակտի անվանումը	Հեղինակը	Հրատարակման կամ ընդունման տարեթիվը N
1	Դպրոցի ղեկավարում և կառավարում	Ս. Խրիմյան և ուրիշներ	Երևան-2003
2	«Դաստիարակչական աշխատանքը դպրոցում» /Ձեռնարկ դաստիարակության գծով փոխտնօրենների և դասղեկների համար/	ՀՀ ԿԳՆ կրութոյան ազգային ինստիտուտ	Երևան-2007
3	«Դասղեկ» /նոր մոտեցումներ դաստիարակչական աշխատանքներում/ մեթոդական ձեռնարկ	Ռուզաննա Մուրադյան	Երևան-2007
4	Մանկավարժության միջօրեականներում	Բ. Թ. Վարդանյան	Հեղինակային հրատարակչություն-2007
5	«Դաստիարակչական աշխատանքը դպրոցում: Մասնագիտական կողմնորոշման խնդիրներ»	ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինտիտուտ /խումբ՝ Մ. Դավթյան և ուրիշներ/	Երևան-2010
6	Դպրոցի զարգացման ծրագիրը	Ռ. Մուրադյան և ուրիշներ	Երևան-2014
7	«Կրթության մասին»	ՀՀ օրենք	14.04.1999թ., ՀՕ297
8	«Հանրակրթության մասին»	ՀՀ օրենք	10.07.2009թ., ՀՕ 160-Ն

9	«Օրինակելի կանոնադրության «Հայաստանի Հանրապետության պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության»	ՀՀ կառավարության որոշում	26.12.2002թ., N2179-Ն, N 3 հավելված
10	«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին»	ՀՀ կառավարության որոշում	04.03.2010թ., N319-Ն
11	«Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը ... մասին»	ՀՀ կառավարության որոշում	08.04.2040թ., N439-Ն
12	«Հանրակրթության ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափորոշիչները և իրականացման կարգը հաստատելու մասին»	ՀՀ կառավարության որոշում	03.092010թ., N1334-Ն
13	«Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին»	ՀՀ կառավարության որոշում	14.10.2010թ., N1391-Ն
14	«Կարգ Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման»	ՀՀ ԿԳ նախարարի հրաման	18.03.2010թ., N113-Ն

15	«Օրինակելի կանոնադրություն «Հայաստանի հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի»	ՀՀ ԿԳՆ նախարարի հրաման	17.05.2011թ., N571-Ն
16	«Կարգ հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության»	ՀՀ ԿԳՆ նախարարի հրաման	30.03.2015թ. N205Ա/Ք
17	«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ»	ՀՀ ԿԳՆ նախարարի հրաման	13.04.2017թ. N370-Ն
18	«Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2015-2016 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին»	ՀՀ օրենքի նախագիծ	